



ՀԱՏՈՐ Ծ

1892

ՓԵՏՐՈՒԱՐ

ՈՒՍՈՒՄՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՅԵՐԵՐՈՊՈՒ

(ՏԵՍ ԴԷԶՅ)



ՍՈՆԲ են գաղղիացի Շրումպի հայագէտ բա-
նասիրին Ջրպետի և իր ժամանակին անցից վը-
րայ հաւաքած և աւանդած տեղեկութիւններն :
Առանց ուղեկու արժանիքէ վեր գիտութիւն և
արդիւնք մը ընծայել Ջրպետի, մեզի կ'երևի
թէ նոյն ատենուան տիրող բանասիրական
կուսակցութեան ոգւոյն հետեանք մը եղած է գրեթէ բոնադա-
տուիլը թողուլ զուտւոյցութիւն հայ լեզուի ի նորահաստատ
դպրոցին արեւելեան լեզուաց փարիզու. և իրեն դէմ ցուցուած
հակառակութեան գլխաւոր պատճառը կամ այն էր որ նոյն
պաշտաման հետամուտք պակաս չէին, և կամ գաղղիացւոյ մը կը
փափաքէին որ յանձնուի այն, ինչպէս դպրոցին սահմանադրու-
թիւնը կը թուէր պահանջել, նախամեծար սեպելով քան զօ-
տարս : Սակայն հարկ է խոստովանիլ թէ իր արդիւնքն ունի
Ջրպետ, հայ լեզուի ուսման ներմուծմանն և յառաջադիմութեա-
նըն ի մայրաքաղաքին Գաղղիոյ :

Յառաջ բերենք՝ առ բարեկամս իւր ուղղած քանի մը նամակներէն, զոր ունինք, հետեւեալ տեղեկութիւններն, որ չեն պակաս հետաքննականք ըլլալէն՝ հայկական լեզուի աթոռոյ հաստատութեան և գէթ նոյն ժամանակաց համար յառաջ բերած արգեանց վրայ։ Իրեն քիչ պատիւ չէ Սէն-Մարիթէնի նման ուսումնական և բազմահմուտ հայագէտ մը նախ իրեն աշակերտ ու ապա աշխատակից ունենալը։

Յ'12 դեկտեմբ. 1812 տարւոյն կը գրէ. «Չհաստատութենէ դպրոցի հայկազեան բարբառոյ՝ դեռ զոչինչ գրեցի. և այս վասն ոչ գիտելոյ իմ և ևս զորպիսութիւն ապագայ ելից նորուն. այլ այժմ յորդորիմ ծանուցանել աստ ստուգութեամբ ինչ. զառաջինն հաստատեալ այս դպրոց յ'3 հոկտեմբերի 1799 հրամանաւ նախարարին ներքնային իրաց տէրութեանս, բարձեալ եղև ի նըմանէ զկնի չորից ամաց, իբր ոչ յոյժ պիտանի, պատճառաւ ոչ ունելոյ Հայոցս զիշխանութիւն թագաւորական. ապա յ'8 դեկտեմբերի 1810 ժամանակեայ հաստատութեամբ՝ որպէս նախկինն անգամ վերստին հաստատեցաւ հրամանաւ նոյն նախարարութեան իբր հարկաւոր իմն լեզու յինչ ինչ իրս։ Վերջապէս յետ կրելոյ և միանգամայն յաղթելոյ բազում ընդդիմութեանց ցուցակօք գրուածոց՝ հաստատեալ եղև սոյն դպրոց ի 27 փետրուարի տարւոյս հրովարտակաւ կայսեր՝ որպէս օրէնք. և այսպէս կարգեցաւ ուսումն լեզուին մերոյ՝ համադաս ընդ լեզուացն տաճկաց, պարսից և արաբացոց՝ որք բաղկացուցանեն զվարժարանն արեւելեան բարբառոց՝ կարգեալ ի պէտս քաղաքական և վաճառական առընչութեանց»։

Ի և փետր. (1815). «Դպրութիւն լեզուի մերոյ և գրականութեան՝ վերաճանաչեալ ի տէրութենէ և ի համալսարանէ աղգին՝ ըստ որում լեզու սուրբ, բուն և հնագոյն, սկսեալ եղև ի սկսանիլ դպրական ամի, միշտ ի նոյն դպրոցի, որոյ նպատակն է ուսումն լեզուաց և իրակութեանց գիւմնաց արեւելեան ազգաց։ Շնորհապարտ մնամք առ ազգս այս արդարեւ, որ յարտաքսելն ի դպրոցէս զդպրութիւն յունական լեզուի և յունաղնեայ վարժապետի, զմերայինս պահել յօժարեցաւ ի մասնաւոր իմն շնորհ առ մեզ, և ի պատճառս բարեբարոյութեան աղգին մերոյ, և յառաջագիմութեան հաւատարիմ գրականութեան արեւելեան աշխարհաց»։

Ուրիշ նամակի մը մէջ ալ. (22 դեկտ. 1815). «Յարգութիւն հայկական գրագիտութեան և ծանօթութիւն լեզուի մերոյ յաւելանան աստ հետգհետէ. կարգեալ գորով ի թէութենէ իմն՝ որ աւելի ի յառաջագիմութիւն հրապուրէ, քան յընդ կրուելին դառնալ, վասն որոյ խնդրեն զինչ և իցէ հայկազեան գրեանս ընտրու-

զարար, մանաւանդ զայնս որ վերաբերին ի դիտութիւն լեզուի, տաղաչափութեան, պատմութեան, աշխարհագրութեան, հնախօսութեան և այլ արտաքին բանասիրութեանց, նաև ոմանց եկեղեցական գրականութեանց . . . Ազգս այս ընուստ գործունեայ և յօժարակամ ի փոխել կամ ի յաւելուլ գնպատակա մտաւորական կրից առ ի չերևիլ ստորին, աւելի աժխոյժութեամբ երկասիրէ զգիտութիւնս : Յայտնի է թէ կաճառք գրագիտացն Եւրոպիոյ՝ իւրեանցն սեպհական արգեամբք զրազումս արգասաւորութիւնս և զվերականգնումն անուան և գրագիտութեան յունաց համբարեցին, մինչև տալ իսկ նոցա զգիւրութիւն և զյորդոր ի յուսմունքս : Ապա քանի՜ հաճոյական լինէր ձեզ և մեզ, եթէ գրականութեան ազգի մերոյ և ևս այսպիսոց իմի վիճակի էր հանդիպեալ կամ մերձեցեալ . . .

« Զգպրոց մեր միշտ հաստատուն ի նոյնութեան՝ բացեալ ի հի' գ ամոյս՝ յետ զրաւելոյ զսովորական արձակուրդ ժամանակս՝ սկսաք զկարգ դասատուութեանց : Յ'9 ամոյս ընտրեալ եղէ անդամ գործակալ ճեմարանին թագաւորական ընկերութեան հնագիտաց Գաղղիոյ (Académie de la société royale des Antiquaires de France). ապա յ'18 ընկալայ զհրովարտակն, ի յ'19 զընդունումն ըստ սովորութեան Ճեմարանս ի հնումն կոչէր Ելեղոնան (Académie Celtique), և ի 1805 ընկալաւ զնոր սահմանադրութիւնը և զրազում ընդարձակութիւնս : և ի 1816 զայլ թագաւորական արտունութիւնս՝ վարժարանն հնութեան և յիշատակարանաց Գաղղիոյ (Le Musée des Antiquités et des Monuments français) է ընդ պահպանութեամբ նորա, յորում է և դամբարանն երանելի հոգւոյ թագաւորին մերոյ Լիւնի Զ. ճեմարանն պարապի հասարակօրէն ի վերայ հնագիտութեանց, պատմութեանց, աշխարհագրութեանց, յիշատակարանաց, ժամանակագրութեանց և այլ բազում բանասիրական հմտութեանց» :

Այս նամակք ուղղեալ են առ մեծարգոյ Աւետիքեան վարդապետն մեր, որ և առ նոյն Զրպետեան ուսուցիչ ուղղեալ թղթով մը (1811, նոյեմբ. 11) կը փափաքէր գիտնալ թէ « Յակնարկել մեր զԲառարան երևելի արանց, տեսաք ինչ ինչ պատմական կամ գրաբանական ի յօդուածսն մատակարարեալս ձէնջ՝ անձանօթս ի մէնջ մինչև ցայժմ, և ոչ հանդիպեալ ի յիշատակարանսն գրտեալս առ մեզ. նմին իրի ցանկալի էր մեզ լսել զուստն, կամ ըզյորմէն : Օրինակի աղապաւ, յիշուցուք զեղեայն ի յօդուածն Ալեքան, մի յաշակերտաց թարգմանչացն, զորմէ ասի թարգմանեալ զգործ մեծին Աթանասի, և ճառ մի ընդդէմ կրակապաշտութեան, և մի ի վերայ սրբոյն Պաւլոսի, և մի ի Համբարձումն

Քրիստոսի : Այլ և ի յօգուածն Ղազարիկ , ասի սորա թարգմանեալ գծամանակագրութիւն Յուդեայ Սփրիկանոսի , և այլ եւս գործք : Զայսոսիկ և զայսպիսիս , որոց յիշատակ չերևի ի մերում գրատան , և ոչ այդր , և կայսերականն կամ ի թագաւորականն , ցանկայաք իմանալ յորոց աղբերաց տեղեկացեալ ձեր և կամ եթէ կայցէ յիշատակ ի գրատունս որք այդր , և մոռացումն լեալ իցէ նշանակել ի Բառարանին , խնդրեմք շնորհել մեզ տեղեկութիւն» :

Առ որ կը պատասխանէ Զրպետ նոյն տարւոյ գեկտ . 20 ին գըրած նամակաւն . « Վասն տեղեկութեանցն զոր ցանկայք գիտել թէ ուստի՝ կամ յորմէ մատենէ հանեալ իցէ իմ զյիշատակարանս ոմանց գրուածոց և թարգմանութեանց Արձան և Ղազարիկ թարգմանչաց մերոց՝ որպէս և այլոց , պարտիմ ծանուցանել թէ յոչինչ մատենէ կայսերական գրատան ունիմ զայնս , այլ ի հատուկտիր բանից ինչ թողեալ ի վերայ Հայոցս՝ ի Հ . Մկրտչէ ումեմնէ Գաբրիէլեան ի կարգէ գաբուշինաց , որ երևի աւելի վարժեալ ի հայկական գրչութիւնս՝ քան զայլ օտարազնեայս . որ աւարար զԲառարան ինչ ի հայ լեզուէ ի լատին և յիտալական լեզուս , և զայլ իմն բառարան ի լատինականէ ի հայ : Գրեանք սորա՝ թէ՛ ձեռագիր և թէ տպեալ , անցին նախ ի ձեռս Հ . Գ . Վիլլաֆօրայ , ապա գրեան երկոցունց սոցա , զորս լուռտէ տեսեալ է , որպէս և բառագիրք երկրորդ անձինս . . . միանգամայն և ուրուագիծ ծանօթութիւնք ի վերայ ձեռագիր մատենից Հայոց թողեալ ի Վիլլաֆօրա հայասիրէն , և այլ ինչ մանրակատար բանք մինչև նամակք եւս անցին ի ձեռս իմ , և Մարթէն անուն աշակերտին իմոյ : Այլ վերոյիշեալ հատուկտիր գրուածն՝ յինն երեսս պարունակեալ , տայ զանուանս անձանց և գրուածոց հարիւր տասն հեղինակաց Հայոց» :

Հարցմունք մ'ալ կ'ընէ նոյն իր բազմահմուտ թղթակցին . « Յա՛կամ յոյժ , կ'ըսէ , ծանօթ առնել զիս եթէ տեսեալ է ձեր զգոյշն ինչ վկայութիւն ի յոյն կամ յարաբացի հեղինակս՝ արքայ արքայից անուանելոյ ոմանց թագաւորաց մերոց Բագրատունեաց . զի որպէս յայտ է ձերումդ իմաստութեան Զմէկիկ հայկազն կայսր ի նամակին որ առ Մատթէի եղեսացւոյ՝ զայս վերտառութիւն տայ թագաւորին մերոյ Աշոտոյ երրորդի . այլ ոմն ի համալսարանէ տեղւոյս՝ ինձ մեծապէս ծանօթ և բարեկամութեամբ թակցեալ , ընթերցեալ զայս բան ի թարգմանեալն յայն նամակ , գրեաց յանցեալ աւուրս զերկար թուղթ ինչ առ Մարթէն աշակերտն , ցուցանելով անկարելի իմն լինել գոռոզութեան յունաց՝ տալ զայնպիսի իմն վերտառութիւն արքայից Հայոց , մինչև յերկրայս դնել զհարաւ գատութիւն բարեմիտ մատենագրին մերոյ Մատթէոսի երիցոյ ,

և հայասէրն Մարթէն բերեալ մատոյց ինձ վաղվաղակի զայն թուղթ. որում փութացայ տալ զպատասխանի... այլ ցանկամ նորոգել զայս բան յայլում տեղոջ՝ վկայութեամբ օտարասեռից եւս : փափաքելի է ինձ դարձեալ գիտել թէ իցե՞ք ի ձեզ արդեօք ծանօթութիւն ինչ ի վերայ դրամից տպելոց յանուն թագաւորացն մերոց Բագրատունեաց և Աղուանից» :

Այս հարցասիրութեանն ալ հետեւեալ պատասխանը կ'ընդունի (6 մայիս, 1812). « Ընդ նախընծայ պտուղս հայասէր աշակերտացը՝ ուրախութիւն յոյժ ընկալաք, իբրև ընդ երախայրիս բազմաջան մշակութեան վարժապետիդ : Հաճութեամբ սրտի տեսաւ նել ախորժեմք զթարգմանութիւն նամակի Չմէկիկ կայսեր առ մերս Աշոտ թագաւոր : այլ ոչ զարմացաք ընդ գիմադրութիւն իմաստնոյ ուրումն համախարանի քաղաքիդ՝ յաղագս արքայից արքայ կոչելոյ հռոմին զհայն : ոչ անսովոր է առ գրագէտս՝ յուզել խնդիրս և վէճս կամաւորականս յառաւելութիւն բացայայտութեան առաջիկայ իրացն : որպէս կարծեմք և իմաստնոյ առնդ յայսմ պատճառէ շարժել զընդգիմաբանութիւնն : ոչ աղացոյցս ինչ պատմականս ունելով ի ձեռին, այլ միայն յազգային բարուցն յունաց առեալ պատճառաբանութիւն : Վայելաբար ցուցեալ է ձեր զանկեղծութիւն բանից նամակին ի հարազատ պատմագրաց մերոց, առաջի արարեալ զընաւորութիւնս ազգիս՝ անպարծ լինել յիւրական պատմութիւնսն, գուցէ առաւել փոքրկացուցեալ քան զարժանն, ուր ընդ հակառակն յունաց և հռովմայեցւոց սեպհական տեսանեմք ի պատմութիւնս ազգաց իւրեանց թռուցանել ըզգրիչս ի վեր քան զգլուխ պատմելեացն :

« Իսկ զոր հարցանէք՝ յիշատակս ինչ հաստատութեան ունել այսր վերտառութեան, ահա յերկու յոյն մատենագիրս գտանեմք յունական բառիւ զնոյն իմաստս. որոց պատմագրելով զերթն Աշոտոյ Բ ի կոստանդնուպոլիս, կոչեն վնա որդի դռն արխունդոս դռն արխունդոս ուր է ըստ հայումն արքայից արքային :

« Ապա եթէ յազգային բարուց կամիցիմք խորհրդաբանել, թող անկարելի համարեսցի գոռոզութեան յունաց արքայից արքայ մակագրել զհայն : Սակայն գիտասցէ զի Յովհաննէս Չմէկիկ ոչ էր յոյն արեսմբ, այլ հայկազն : և իբրև ազատ ի յունական բարուց՝ ոչ անպատիւ ինքեան համարէր՝ զիւրն համազգի պատուաբանել : Թողում ասել զի յԱշոտոյ երկրորդէ սկսեալ էր ըստ այլազգեաց Շահաւնաւ անուանել զԲագրատունի թագաւորս մեր : և Չմէկիկ կայսր ըստ ընկալեալ սովորութեանն մականուանէր զԱշոտ Գ : ... :

« Այլ առ երկրորդ հարցուածդ՝ որ յաղագս դրամից Բագրա-

տունեացն և Աղուանից, ոչ ունիմք տալ բնաւ ծանօթութիւնս ինչ փափաքելիս . այլ՝ որպէս յուսադրութիւն է՝ թերեւս այն որ զիշխանութիւն ժամանակաց ունի ի ձեռին, յերեւան ածիցէ յերբեմն ժամանակի ի շտիմարանաց աւերակացն Հայաստանի»:

Այսպիսի ինչ, իբր փշուրք՝ ի մեր մատենադարանաց, ի հաւաստիս հմուտութեան և բանասէր ախորժակաց Զրպետի:

Կը մնայ մեզ քանի մը խօսք աւելցընել իր երկասիրած Հայ լեզուի քերականութեան վրայ, զոր չենք համարիր անսագտանելի . միայն անաչառ քննադատից կը յիշեցընենք թէ գրեթէ առաջին փորձ մ'է մեր լեզուն հիմնաբար ծանօթացընելու արեւմտից, և որոյ մէջ է իր գլխաւոր արժէքը և հեղինակին արդիւնքը:

Գիրքը հրատարակուած է ի փարիզ, ի 1823, հետեւեալ գաղղիական և հայ խորագրով. Grammaire de la langue Arménienne, où l'on expose les principes et les règles de la langue, d'après les meilleurs grammairiens, et les auteurs originaux et suivant les usages particuliers de l'idiome Haïkien; rédigée pour les Elèves de l'Ecole Royale et spécial des langues orientales vivantes, près la Bibliothèque du Roi; par J. Ch. Cirbied, Arménien, professeur royal de langue arménienne en la même Ecole, etc. Քերականութիւն Արամեան լեզուի, յորում բացատրին սկզբունք և կանոնք Արամեան լեզուին ըստ հեղինակութեան ընտրելագոյն Քերթողաց, ուղղախօս Մատենագրաց և սեպհական սովորութեանց հայկական բարբառոյ, յօրինեալ ի պէտս ուսման աշակերտացն արքայական և մասնաւոր Դպրոցի արեւելեան լեզուաց թագաւորական Գրատան, ի Յակովբայ Շահան Զրպետեան յեղեսացոյ» և այլն:

Ի սկիզբն գրոցն գրուած յընդարձակ յառաջաբանին կ'ըսէ (յ'էջ 47). «Գրեթէ դարէ մը ի վեր հայկական լեզուի օգտակարութիւնը ճանչցուեցաւ ի բազմաց, և մասնաւանդ յիմաստնոց Գաղղիոյ, Գերմանիոյ և Անգղիոյ . սակայն մշակութիւնն խիստ անկատար կերպով եղած է: Ոմանք յոյժ թեթեւաբար կը դատէին, ինքզինքնին բաւական հմտացած կարծելով, երբ հազիւ ընթերցումը դիտէին և քանի մը բառից նշանակութիւնը: Այլք իմաստնագոյնք և առաւել լուսամիտք, խելամուտք էին թէ յորում է լեզուի մը ծանօթութիւնը, և թէ ի՞նչ պէտք է զայն ձեռք բերելու համար, սակայն իրենց ալ ամէն հարկաւոր միջոց կը պակսէր, իրենց դէմ ելած արգելից յաղթելով, յաջողութեամբ և օգտիւ մշակելու զհայկականն: Այդ նպատակին հասնելու համար՝ չունէին ընտիր բառգիրք մը լատին կամ գաղղիական բացատրութեամբ, և ոչ կատարեալ քերականութիւն մը որով կարող ըլլան ծանօթանալ լեզուին սկզբանց, կանոններուն և ոճից: Գիտնա-

կանքն վիլլոտ, Պրէննեռ, Շրօտէր, Ուիսթն, Վիլֆոուա, Լուստէ, կը խոստովանին կրած դժուարութիւննին, և այն աշխատանք զոր ունեցեր են հայ մատենագիրները քիչ շատ հասկընալու համար։ Հայագիտաց մէջ՝ ամենէն աւելի այդ աշխարհին մատենագրաց ընտանեցողը, զանոնք լաւ հասկըցողը, ըստ մեզ է առաքինի և համեստ քահանայն վիլֆոուա. իմաստուն արևելագէտն, որ անցեալ դարու կիսուն մանրամասն ցուցակ մը յօրինեց (ֆարիզու) արքունի մատենանադարանին մէջ գտնուած ձեռագիր կամ տպագրեալ մատենից։ Այս երկասիրութիւնն աչքէ անցուցած ատեն՝ հմուտ ընթերցողը կը հանդիպի յաճախ վրիպակաց կամ բնագրին իմաստից հակառակ նշանակութեանց, բայց մի և նոյն ժամանակ հաճոյական զարմանք մ'ալ կը զգայ, տեսնելով զազդիացի մը այնչափ ծանօթացած ամենազգի հայ մատենագրաց լեզուին, երբեմն ամենէն աւելի դժուարին տողերն ալ հասկընալով, և որոյ համար խորունկ ուսումն կը պահանջուի։ Բոլորովին օտար էր իրեն լեզուն՝ որոյ ուսմանն հետամուտ էր, և այսպիսի հետազօտութեանց պարագած ատեն՝ չունէր դեռ եւս հիմն ձեռուընուս տակ գտնուած ընտիր քերականութիւններն ու բառգիրք . . . իր արդեանց վրայ այս ակնարկութիւնն ընելով՝ պարտք կը սեպենք յայտնել մեր հիացումն և երախտագիտութիւնն այս հմուտ հայագիտին անուան և յիշատակին՝ յարժանաւոր մեծարանս և ի պատիւ ** . . .

Շարայարեկի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԵՍՐԱՊ

ՅՈՒՆՍԱՀԱՅ ԲԱՌԳԵՐԶ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ (Կ. ՊՈԽՍ 1892)

Գաղղիարէմ լեզուի ուսումը դիւրացնելու և ազգերմուս մ'էջ աւելի բարգաւաճ ընելու սահմանուած ըմտիր Բառգրոց վրայ կ'աւելնայ մաս Նուպարեանմ։ Նթէ ամիսոջ և բազմազատակ չեղիմակմ այս երկասիրութիւն և կատարելութիւնը պարտք կ'ս մասամբ իրեն մարմնթացից երկայնամիտ, բազմահմուտ ջանից, սակայն չեմք կրմար ժխտել, — մամաւանդ թէ կը հուշակեմք, — թէ մեծագոյն արդիւնք մ'ալ իրեն կը պատկանի։

Ոչ չեղիմակմ կը պահանջէ, և ոչ մեծք կ'իշխեմք ըսել թէ ըստ մեծայնի կատարեալ երկ մ'է. այլ իր ամուսմը և հմտութեան մեծապէս պատիւ ըմող ամբողջութեան ամէմ կատարելութեամբն ալ ունի այժպիսի կէտեր կամ դրութիւնք՝ որոց վրայ լեզուի բանասիրութիւն իրաւունք ունի վիճելու կամ ամիսմածայն գտնուելու։ Ամով զրուսիքն յարգը չի պակսիր, և ոչ միւր մեծարամաց և խնդակցութեան պարտք առ չեղիմակմ։